ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Անի համայնք

«Շինֆորում» ՍՊԸ տնօրեն
պրն Գասպարյանին

N 1057
20 դեկտեմբերի 2019թ.

Հարգելի պարոն Գասպարյան

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանը «Շինֆորում» ՍՊԸ-ի հետ ս/թ հոկտեմբերի 18-ին կնքել է «ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի Սառնաղբյուր բնակավայրի գերեզմանոց տանող ճանապարհի ասֆալտապատման» աշխատանքների ձեռքբերման թիվ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/25 պայմանագիրը, ըստ որի շինարարական աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել ս/թ նոյեմբերի 20-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի հետ կնքված 18.10.2019 թ.–ի թիվ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/25 աշխատանքների ձեռքբերման պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, այն է շինարարական աշխատանքները սկսել ֆինանսական միջոցներ նախատեսվելու պայմանով, իսկ բյուջետային տարին ավարտվում է և համայնքային բյուջեում չկան համապատասխան միջոցներ, որի արդյունքում էլ նշված պայմանագիրը լուծվել է.

2. Հիմք ընդունելով Պայմանագրի 8.8 կետի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները և կապալառուի կողմից ներկայացված գրությունը, որոշվել է՝

1) լուծել «Շ ֆորում» ՍՊԸ-ի հետ 18.10.2019 թ.–ի կնքված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարանի կարիքների համար կապալային աշխատանքների ձեռքբերման թիվ ԱՀ-ԳՀԱՇՁԲ-19/25 պայմանագիրը:

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ